ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ք. Չարենցավան 04.02.2025 թ

Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ստացված հայտերի գնահատման փուլ

Հանդիպման բացման խոսքով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Ս. Վարդանյանը, ով խոսեց մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների, արձանագրված հաջողությունների և հետագա անելիքների մասին: Ընդունված հայտերը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց հանձնաժողովի անդամ՝ Ս. Բալաբեկյանը: Նա նշեց, որ քաղաքացիները եղել են ակտիվ, ներկայացված հայտերի քանակը 14-ն է, դրանք են՝

1. Չարենցավանի 3-րդ թաղամասի լողավազանի և հարակից տարածքի բարեկարգում
2. Բառարանների և գրքերի խանութ
3. Երեխաների և պատանիների համար նախատեսված մանկական մարզական խաղահրապարակի կառուցում 8-րդ թաղամասում
4. Կանաչ Հեքիաթ
5. Չարենցավան համայնքի բոլոր ՀՈԱԿ-ների անվտանգության ապահովում նորագույն տեխնոլոգիաներով
6. Ալափարսի Մշակույթի տան տանիքի հիմնանորոգում
7. ՀՈԱԿ-ների ապաստարանների կառուցում
8. Կիրակնօրյա վարժարանի տարածքի վերանորոգում, երիտասարդական կենտրոնի հիմնում
9. Արհեստի ժառանգություն
10. Բջնի բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ
11. Ռոբոտաշինություն և ծրագրավորում
12. Հավասար հնարավորություններ բոլորի համար
13. Նորարար գրադարան
14. 9-րդ և 10-րդ թաղամասերում ճանապարհային ենթակառուցվածքների հիմնանորոգում

Հանձնաժողովի անդամները հայտնեցին իրենց կարծիքները, դիտարկումները և ըստ ուղեցույցի կատարվեց գնահատման փուլ, ընտրվեցին հետևյալ հայտերը՝

1. Չարենցավանի 3-րդ թաղամասի լողավազանի և հարակից տարածքի բարեկարգում
2. Երեխաների և պատանիների համար նախատեսված մանկական մարզական խաղահրապարակի կառուցում 8-րդ թաղամասում
3. Ալափարսի Մշակույթի տան տանիքի հիմնանորոգում

4. Բջնի բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ
5. Նորարար գրադարան
6. 9-րդ և 10-րդ թաղամասերում ճանապարհային ենթակառուցվածքների հիմնանորոգում

- «Բառարանների և գրքերի խանութ» ծրագիրը չանցավ քվեարկության փուլ, քանի որ ամբողջությամբ բիզնես գաղափար էր:
- «Կանաչ Հեքիաթ» ծրագիրը նախատեսում էր դեկորատիվ կանաչապատման աշխատանքներ կոնկրետ մանկապարտեզի տարածքում, այն չէր նախատեսում հանրային կարևորություն համարվող խնդրի լուծում, չի ենթադրում կապիտալ աշխատանքներ, ուստի չդրվեց քվեարկության:
- «Չարենցավան համայնքի բոլոր ՀՈԱԿ-ների անվտանգության ապահովում նորագույն տեխնոլոգիաներով» ծրագիրը չդրվեց քվեարկության, քանի որ սա նույնպես չէր նախատեսում կապիտալ բնույթի աշխատանքներ:
- ՀՈԱԿ-ների ապաստարանների կառուցում ծրագիրը չդրվեց քվեարկության, քանի որ այս պահին համայնքն ունի անհրաժեշտ քանակությամբ ապաստարաններ, և յուրաքանչյուր ՀՈԱԿ—ի համար առանձին ապաստարան կառուցելն արդիական ու արդյունավետ չէր լինի:
- «Կիրակնօրյա վարժարանի տարածքի վերանորոգում, երիտասարդական կենտրոնի հիմնում» ծրագիրը չդրվեց քվեարկության, քանի որ տարածքը համարվում է Հայ առաքելական եկեղեցու սեփականությունը:
- «Արհեստի ժառանգություն» ծրագիրը չդրվեց քվեարկության, քանի որ հայտատուն կարող է ծրագիրն առանց խոչընդոտների իրականացնել համայնքի տարածքում գործող ցանկացած մշակութային ՀՈԱԿ-ում:
- «Ռոբոտաշինություն և ծրագրավորում» ծրագիրը չդրվեց քվերակության, քանի որ «Արմաթ» լաբորատորիայի հետ պայմանավորվածությունների ձեռքբերումից հետո ծրագիրը կիրականացվի համայնքի բյուջեի միջոցներով:
- «Հավասար հնարավորություններ բոլորի համար» ծրագիրը չդրվեց քվեարկության, քանի որ այն նույնպես կապիտալ բնույթի աշխատանքներ չէր նախատեսում:

Ըստ ժամանակացույցի հայտերը դրվեցին քվեարկության՝ 07.02.2025թ-ին: Քվերակության վերջնաժամկետ սահմանվեց 28.02.2025թ-ը:

Հանձնաժողովի նախագահ՝ **Սևակ Վարդանյան**

Հանձնաժողովի անդամներ՝ **Աշոտ Ծերունյան**

Սաթենիկ Բալաբեկյան

Գայանե Անտոնյան

Մնացական Պողոսյան

Վահագն Մարգարյան

Մարինե Հարությունյան

Վահե Անդրիասյան

Հովհաննես Անդրեասյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ Մարիամ Քոչարյանը: